

ենթարկուած Է, պատշաճեցնելու համար օրուան պայմաններուն եւ պահանջներուն:

1948 թուականին, Համաշխարհային Բժշկական Ընկերակցութիւնը (World Medical Association, WMA), Ժընեւի մէջ հաստատեց Հիպոկրատեան երդումի վրայ հիմնուած Նոր յայտարարութիւն մը, որ ծանօթ Է Նաեւ «Ժընեւի բժիշկներու երդում» անունին տակ: Նոյն ընկերակցութիւնը, 1964 թուականին, հաստատեց Նաեւ բժշկական գիտահետազօտութիւններու յատուկ բարոյագիտական հիմունքներ, Նաեւ ծանօթ՝ «Հելսինքիի յայտարարութիւն» (Declaration of Helsinki) անունով, որ հետագային որոշ բարեփոխումներու ենթարկուեցաւ (վերջին տարբերակը՝ 2008 թ.): Այս յայտարարութեան բարոյագիտական հիմունքները կը կիրառուին բազմաթիւ երկիրներու մէջ:

Բժշկութեան բարոյագիտութեան մարզին մէջ, որպէս հիմնական արժեքներ կը ներկայանան.-

- 1) մարդու (հիւանդին) բարօրութիւնն ու արժանապատուութիւնը,
- 2) մարդոց (հիւանդներու) ինքնորոշման իրաւունքը եւ
- 3) մարդու (հիւանդին) չվնասելու սկզբունքը („Primum non nocere“ = «նախ եւ առաջ՝ մի՛ վնասեր» նշանաբանով):

Վերջին տասնամեակներու ընթացքին, բժշկական գիտութեան մեծաքայլ յառաջդիմութիւնը եւ մարդու գիտակցական զարգացումը պատճառներ պիտի ըլլային, որ վերատեսութեան ենթարկուէր բժշկական ասպարէզի զանազան հարցադրումները, օրինակ՝ ծինաբանութեան (Genetics), արուեստական բեղմնաւորումի, վիժումի (Abortion), հեշտամահութեան (Euthanasia), մարմնի մասերու փոխպատուաստման (Transplantation), գերհոգատարական բժշկութեան (Intensive Medicine), համասեռականութեան (Homosexuality) ու սեռային հարցերը եւ վերջապէս համաճակներու եւ առողջապահական հարցերը: Այս ձեւով դարձեալ այժմեական կը դառնար բժշկութեան բարոյագիտութիւնը:

Բժշկութեան բարոյագիտութիւնը մանրամասնուած Է «Կիրառական բարոյագիտութեան» Մաս – 7ի մէջ (Էջ 242):



Սպասելի Է, որ 21-րդ դարու ընթացքին, բարոյագիտութիւնը դառնայ համալսարաններու մէջ աւելի՛ ուսումնասիրութեան ենթակայ նիւթ մը, ինչպէս Նաեւ ընկերային ու քաղաքական կեանքի մէջ աւելի՛ վիճարկման ենթակայ փիլիսոփայական ճիւղ մը:

